*Հեղինակ՝ Էդգար Մանուկյան*

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ և ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ /ԴԻՍԼԵՔՍԻԱ և ԴԻՍԳՐԱՖԻԱ/

Ընթերցանության և գրավոր խոսքի տարաբնույթ խանգարումները կոչվում են դիսլեքսիա և դիսգրաֆիա: Այս խանգարումները կարող են հանդիպել ինչպես մեծահասակների, այնպես էլ՝ կրտսեր դպրոցականների մոտ(1): Մեծահասակների մոտ ընթերցանության և գրավոր խոսքի արդեն ձևավորված հմտության կորուստը կամ խանգարումը, որպես կանոն, պայմանավորված է գլխուղեղի տրավմաներով, կաթվածի, նորագոյացությունների և գլխուղեղի վիրահատական միջամտություններով: Ընթերցանության և գրավոր խոսքի խանգարումները կրտսեր դպրոցականների շրջանում հաճախ են հանդիպում. հատկապես՝ տարրական դասարաններում և, որպես կանոն, երեխաների մեծ մասի մոտ այս խնդիրները հաղթահարվում են առանց հատուկ միջամտության: Դա պամանավորված է գլխուղեղի տարբեր բաժինների անհամաչափ հասունությամբ, որը ժամանակի ընթացքում կարգավորվում է(5), ինչպես նաև՝ ընթերցանության և գրավոր խոսքի տեխնիկայի տիրապետման հապաղումով, ինչը ժամանակ է պահանջում:

Սակայն հանդիպում են դեպքեր, երբ ընթերցանության և գրավոր խոսքի շեղումները կրում են կայուն բնույթ: Երեխաները տառաճանաչ չեն, դժվարությամբ են տառերից վանկեր, բառեր, նախադասություններ ստանում, և գրավոր աշխատանքներում ի հայտ են գալիս տառասխալներ, տառերի տեղափոխություններ և բացթողումներ, նմանատիպ տառերի գրության թերություններ, բառերի վերջավորությունների աղավաղումներ, կրճատումներ և այլն:

Որպես կանոն ընթերցանության և գրավոր խոսքի խանգարումները միասին են հանդիպում, սակայն ընթերցանության գործընթացը տարբերվում է գրավոր խոսքի գործընթացից(2): Ընթերցելիս առաջնային նշանակություն ունի տառաճանաչումը՝ գրաֆիկական պատկերի ճանաչումը և գրաֆեման հնչյունի վերածելը, աչքերի սինխրոն շարժումը և տարածաչափական կողմնորոշումը: Գրելիս տեղի է ունենում հակառակ ընթացքը՝ հնչյունը վերածվում է գրաֆիկական պատկերի:

Ե՛վ ընթերցանության, և՛ գրավորի կատարման ժամանակ գործի են դրվում թե՛ զգայական օրգաններն ու վերլուծիչները. թե՛ ուղեղի տարբեր բաժինները, քանի որ ընթերցանությունն ու գիրը բարդ գործընթացներ են: Այս կարողությունների ձևավորման ու զարգացման ընթացքում մեծ նշանակություն ունի նաև կարճատև հիշողության, ուշադրության, տարածական կողմնորոշման համաչափ զարգացումը, հնչյունահնչութային լսողության մակարդակը և միջավայրային մի շարք գործոններ(1):

Խնդրի ուսումնասիրման սկզբնական շրջանում մի շարք մասնագետներ համարում էին, որ դրա առաջացման պատճառը մտավոր թերզարգացումն է, սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընթերցանության և գրի խանգարումները կարող են ի հայտ գալ նաև բարձր մտավոր ունակություններով օժտված մարդկանց մոտ: Ժամանակակից հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ընթերցանության և գրի հետ կապված խնդիրներն առաջանում են տարբեր պատճառներով(3): Օրինակ՝ ուղեղի տարբեր բաժինների ախտահարման, զգայական զույգ օրգանների անհամաչափ զգայունակության, հնչյունահնչութային լսողության խնդիրների, տարածաչափական կողմնորոշման խանգարումների, կարճատև հիշողության և ուշադրության պակասի դեպքերում: Հաշվի առնելով ընթերցանության և գրի խանգարումների պոլիմորֆ բնութը՝ վերականգնողական աշխատանքները կառուցվում են հաշվի առնելով խորքային հետազոտությունների արդյունքում բացահայտված հնարավոր պատճառներն ու գործոնները, օգտագործում են յուրաքանչյուր դեպքի համար համապատասխան մեթոդներ և հնարներ՝ հաճախ նաև զուգահեռ կիրառելով բուժական միջոցառումներ(4):

***Գրականության ցանկ***


1. *Ավագյան Ա.Վ. և ուրիշ, Լոգոպեդիան գործնականում, Եր., Ասողիկ, 2017:*
2. *Կարապետյան Ս. Գ., Կիրակոսյան Ա. Ա., Լոգոպեդական հետազոտության տեսագործնական մոտեցումները, Եր., Էդիթ Պրինտ, 2016:*
3. *Սարատիկյան Լ. Հ., Նյարդահոգեբանական-շտկողական վարժությունների նշանակությունը խոսքի խանգարումներ ունեցող սովորողների վերականգնողական աշխատանքներում, գիտական հանդես, 1(2), Եր., 2011:*
4. *Филичева Т.Б., Особенности формирования речи у детей дошкольного возраста, М., 1999.*
5. *Цветкова Л.С., Мозг и интеллект. Нарушение и восстановление интеллектуальной деятельности, М., 1995.*